Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության	Հայոց ցեղասպանության ուսումնասիրությունը գործնական աշխատանքների միջոցով:
Ուսուցչի տվյալներ • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող	Սիրանուշ Էդուարդի Նազարյան Պատմության և հասարակագիտության ուսուցիչ siranushnazaryan93@gmail.com
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	Բ.Ժամկոչյանի անվան թիվ 119 ավագ դպրոց Տիգրան Մեծ 64 010-56493 ecole119@mail.ru

Պետք է լինի 1-2 էջ

Բովանդակություն

Ներածություն **2**
Հիմնական բովանդակություն **7**
Եզրակացություններ, առաջարկություններ **1**
Օգտագործված գրականության ցանկ
Հավելվածներ **7**

1 էջ

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	Նպատակը՝ գործնական աշխատանքներով(նկար,տոհմածառ,կոլաժ ,ընտանեկան պատմություններ) աշակերտների հետ ուսումնասիրել հայոց ցեղասպանության թեման:Թեմայի ուսումնասիրության ընթացքում ցույց տալ աշակերտների ներգրավվածությունը, ինքնուրոունության դրսևորումը,արժեքային համակարգի ձևավորումը, ազգային արմատներին վերադառնալու ձգտումը: Հարցը հետևյալն է՝ Գործնական ի՞նչ աշխատանքներով կարելի է ուսումնասիրել հայոց ցեղասպանության թեման 11-րդ դասարանում:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	1. մշակութային կարողունակություն
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	11-րդ դասարան աղջիկ տղա

Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ հարցազրույցի միջոցով եւ այլն)	Հետազոտական մեթոդ ' դիտում
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	1 ամիս

1-2 էջ

Հիմնական բովանդակություն

Գրականության ակնարկ • Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, • Մեջբերումներ գրականությունից,	1. "Հայոց պատմություն" 11-րդ դասագիրք
	"Արևմտահայերի բռնագաղթը այլ բան չէր, քան քողարկված սպանդ: Չկա աշխարհում որևէ լեզու այնքան հարուստ և այնքան գունեղ, որով հնարավոր լիներ նկարագրել նման սարսափները": Ժակ դը Մորգան, ֆրանսիացի գիտնական,1917 թ. Լինել հայ նշանակում է ինքդ քեզ կարողանալ տեղավորել մեր ժողովրդի պատմական անցյալում: Անցյալի վերհիշումը ակտիվ, կառուցողական գործընթաց է: Մեր պատմությունը հաղթանակների, պարտությունների, ձեռքբերումների և կորուստների շղթա է: Այն պայմանավորված է արտաքին և ներքին գործոններով, աշխարհագրական դիրքով,զանազան այլ պատճառներով: Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը շարունակում է արդիական ու խոցելի մնալ յուրաքանչյուր հայի համար: Հայ ժողովրդի նկատմամբ հարևանների ցեղասպան քաղաքականություն շարունակվում է 21-րդ դարում էթնիկ զտում իրականացվեց Արցախում: Օրերս կայծակնային արագությամբ հայաթափվեց Արցախը: Բռնի տեղահանվածներ, խոշտնգվածներ, գաղթ, զոհեր, հայրենազրկում: Սա Թուրքիայում 20_րդ դարի սկզբում իրականացված ցեղասպանության անպատժելիության տրամաբանական շարունակությունն է: Հայրենասիրությունը չի սահմանափակվում միայն հայրենիքի նկատմամբ տածած սիրով, ժողովրդի պատմական անցյալի հաղթանակնեով հպարտանալով: Պակաս կարևոր չէ պատմությունից դասեր քաղելը, հայրենիքի ապագայի համար պատասխանատվությունը, դրա կերտման մեջ յուրաքանչյուրի ակտիվ մասնակցությունը:

Դպրոցում պատմության նույնիսկ ամենահաջողված դասն ունի մեկ թերություն՝ այն սահմանափակված է ժամանակով: Եթե աշակերտները ցուցաբերում են մեծ հետաքրքրություն քննարկվող թեմայի նկատմամբ, ուսուցիչը կարող է կիրառել գործնական աշխատանքներ , որոնց կատարման համար ո՛չ ուսուցիչը, ո՛չ աշակերտը կաշկանդված չեն մեկ դասաժամի ժամանակային սահմանափակումով: Ինչպես նշեցինք, այս գործունեության նպատակը աշակերտների ստեղծագործական ունակությունների բացահայտումն է: Անհրաժեշտ է կազմել գործնական աշխատանքների շարք, որոնցից աշակերտն ինքը հնարավորություն կունենա ընտրել իր համար նախընտրելի աշխատանքը: Աշակերտների ընդգրկումը կատարվում է բացառապես կամավորության սկզբունքով, իսկ գործունեուեության էությունն ու թեման պետք է բխի աշակերտի նախասիրություններից:
Այս գործունեությունը դպրոցականի կողմից նախընտրելի ուսուցման ձև, մեթոդ է, կապված աշակերտների լրացուցիչ կրթության հետ:
Տարիների մանկավարժական գործունեությանս արդյունքում համոզվել եմ,որ պատմություն առարկայի դասավանդման,նաև ուսուցանելու առաջնային նպատակը միայն չպետք է լինի սովորողներին որոշակի ծավալի պատրաստի,կաղապարված գիտելիքի մատուցումը, հանձնարարություններ տալը,գնահատելը: Առարկայի ուսուցանում առավել արդյունավետ է լինում,երբ այն լրացվում է անհատական, ստեղծագործական աշխատանքով, սեփական վերլուծությամբ, նաև կարծիքն արտահայտելու, և ստացած գիտելիքները կիրառելու հնարավորությամբ:
Ցեղասպանությունը, լինելով սթրես, մասշտաբային ողբերգություն , անդառնալի հետք է թողել մեր ժողովրդի ազգային նկարագրին վրա :Յուրաքանչյուր հայ վերապրում է յուրովի, դրա արտացոլումն ժողովրդի պատմական հիշողության մեջ նպաստել է խնդրի միջսերնդային փոխանցմանը: Կոլեկտիվ հիշողությունը ակտիվ անցյալն է, որը ձևավորում է մեր ինքնությունը: Ազգային պատկանելության գիտանցումն ու ցեղասպանության մասին գիտելիքների առկայությունը խոր հուզական հետք են թողնում ավագ դպրոցի աշակերտների մոտ, առաջ բերում բազմաթիվ հարցեր: Դեռահասը ինքնուրույն աշխատանքի միջոցով կարող է հստակ նկարագրել , վերլուծել ցեղասպանության

պատճառահետևանքային կապերը , գնահատական տալիս , իր ժողովրդի պատմության եւ մշակույթի կրող դառնում:

ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Նախապես

1.Կազմել գործնական աշխատանքների տարբերակներ
2.Ըստ ուսումնական պլանի թեման անցնելուց 1 ամիս առաջ առաջադրանքները ներկայացնել աշակերտներին
3.Ամրագրել յուրաքանչյուրի ընտրած գործնական աշխատանքը
4.Պատասխանել աշակերտների հարցերին,և հարկ եղած դեպքում օգնել թեմայի ընտրության հարցում
5.Սահմանել աշխատանքները ներկայացնելու ժամկետ (2 _ 3 շաբաթ)
6.Աշակերտներին ներկայացնել գնահատման սանդղակը և չափանիշները
7.Աշակերտների ցանկության դեպքում ավելացնել նրանց նախընտրած թեման

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Թեմա' "Հայոց ցեղասպանություն"

1. Նկարներ (նկարել)
2.Կոլաժ
3."Խոսում են նախնիներիս նկարները"
4.Տոհմծառս
5.Մակետ
6."Իմ տոհմը վերապրել է....."
7.Սահիկաշար "Պապերիս երկիրը"

Աշխատանքների կատարման համար տրվել է 1ամիս ժամանակ, դրանք պետք է ներկայացվեն ամփոփիչ դասին :Պարտադիր է դրանք շնորհանդեսով ներկայացնելը:

ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ

1.Զարգացնել աշակերտների ստեղծագործական ունակությունները:
2.Բացահայտել ստեղծագործական ձիրքով օժտված աշակերտներին:
3.Վեր հանել թեմայի վերաբերյալ յուրաքանչյուրի անհատական պատկերացումները, վերաբերմունքը:
4.Կոլեկտիվ աշխատանքի փորձի ձեռքբերում:
5.Ինքնագնահատականի բարձրացում:

6.Պատմական հիշողության նորովի ընկալում մեկնաբանում:
7.Թեմայի յուրովի վերլուծություն՝ կախված ընտանեկան դաստիարակությունից և սեփական արմատների գիտակցումից:
8.Նոր թեմայի շուրջ լրացուցիչ գիտելիք ձեռք բերելու ցանկություն զարգացնելը:

ՆԿԱՐՆԵՐ

Չափազանց հետաքրքիր արդյունք գրանցեցինք : Մի խումբ աշակերտներ ընտրել էին "Ցեղասպանություն" թեմայով նկարելու առաջադրանքը:Հանձնարարված էր ներկայացնել իր պատկերացումները, զգացողությունների նկարների միջոցով, չկային սահմանափակումներ: Անհրաժեշտ էր գեղարվեստական պատկերի միջոցով ներկայացնել սեփական պատմական հիշողությունը և հույզերը վաղուց տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ: Առաջադրանքների ընտրության փուլում աշակերտները, ընտրելով իրենց նախընտրական առաջադրանքը, ինքնակամ ընդգրկվեցին վերը նշված գործընթացում:
Ինչպես գիտենք , գեղանկարչության հիմնական նպատակը գեղագիտական հաճույք, մտորում առաջացնելն է: Երեխաների նկարած նկարներին հատուկ է անկեղծությունը, հուզակնությունը...
Գործնական աշխատանքների ամփոփիչ դասին 11/6 դասարանի մի խումբ աշակերտներ ներկայացրին "Ցեղասպանությունն իմ աչքերով " թեմայով աշխատանքները: Գաղափարները,մոտեցումները տարբեր էին,մտածված:
Աշխեն Մատինյանի "Մերոնք" նկարը նվիրված էր իր տատիկի մոր գերդաստանին, որից միայն չորսն են փրկվել և ապաստանել Հայաստանում: Գերդաստանի խորհրդանիշը նա ընտրել է ծաղկած ծիրանենին, որը ապագայում "բերք" տվեց Մայր հայրենիքում: Նկարի անկյունում տատի մոր լուսանկարն է: Աշխատանքը ներկայացնելուն զուգահեռ նա պատմեց իր գերդաստանի պատմությունը: Սա լավագույն աշխատանքներից մեկն էր:
"Հայի աչքեր" նկարի հեղինակը Նելլի Մարգարյանն է, որը 2020թ. պատերազմի արդյունքում ապաստան է գտել Հայաստանում: Հադրութից է, չի սիրում դաս պատմել, քչախոս է, ինքնամփոփ: Աշխատանքը կատարեց սիրով և մեծ պատասխանատվությամբ: Ցուցաբերեց ակտիվություն, սկսեց համագործակցել դաղընկերների

հետ, հաճախ ժպտալ, շփվել դասընկերների հետ: Նրա մեկնաբանմամբ այս կինը մեր ժողովրդի հավաքական կերպարն է, որի աչքերում իր ժողովրդի վերապրած ողբերգությունն է: Նա նաև ներկայացրեց Արցախից տեղահանվելու իր ընտանիքի պատմությունը:
"Դատաստան" նկարի երկկողմանի է: Մի դեպքում խաբված, սրբադասված հայ նահատակներն են նրանց ոտքերի տակ՝ ցեղասպանության հեղինակ երիտթուրքերը: Նկարը թեքելու վերևում որոշում ընդունողներն են, իսկ ներքևում ոտքերից կախված հայերը: Դասարանում այս նկարը ներկայացնելիս լռություն էր:
Ի՞նչ տվեց այս աշխատանքը:
Այն նպաստեց աշակերտների առանձնահատուկ ընդունակությունների բացահայտմանը, որոնք հիմնականում հնարավոր չէ տեսնել ստանդարտ դասապրոցեսի ժամանակ: Գերազանցիկ մի շարք աշակերտներ պասիվ էին : Դրան հակառակ , վատ սովորող մի շարք աշակերտներ ցուցաբերեցին ստեղծագործական ակտիվություն: Որոշ դեպքերում նկարի թեման առաջարկում էր մեկը, նկարում' մեկ ուրիշը: Եվ այս ճանապարհին մենք ականատես եղանք մեծ բացահայտումների: Ամիսներ շարունակ պատմության դասերին պասիվ, լռակյաց աշակերտները, որոնք մշտապես պատճառաբանում էին, որ ցածր դասարաններից սկսած ունեն արտահայտվելու խնդիր, նկարների միջոցով դրսևորեցին թեմայի խորը իմացություն:
Որոշ նկարներում առկա է ընդգծված ագրեսիա թուրքերի նկատմամբ, ունեն խորը բովանդակություն, գաղափարներն ու գնահատականները համարձակ են: Բոլոր նկարները ունեցան հուզական խորը ներգործություն:
Ցեղասպանության թեմայով նկարներում հիմնականում գույներն օգտագործվում են միանշանակ: Օրինակ' թուրքերին նկարելիս գերիշխում է սևը, հայերին՝ 'կարմիրը,: Կարմիր կակաչներ, դրոշներ, կիսավեր եկեղեցի, խաչքար, տապանաքարերը, յաթաղան, կախաղան, նուռ, ծաղկած ծիրանի ծառ ,հայի աչքեր այս սիմվոլները առավել հաճախ էին օգտագործվել: Այս առաջադրանքը կատարելիս մեծ է ուսուցչի դերը: Պետք է կարողանալ ճիշտ ներկայացնել ակնկալիքները, խրախուսել հետաքրքիր գաղափարները, հարկ եղած դեպքում խորհուրդ տալ խուսափել այնպիսի

տեսարաններ պատկերելուց, որոնք կարող են բացասական հոգեբանական ազդեցություն ունենալ դեռահաս դիտողի վրա:Չափազանց կարևոր է խուսափել աշակերտի վրա ճնշում գործադրելուց, խանգարել նրա ակտիվ մտածողությունը, թույլ տալ պաշտպանել և իրականացնել սեփական պատկերացումները: Այս դեպքում նկարները կստացվեն ավելի անկեղծ, խոսուն, ազդեցիկ, ինքնատիպ:

ՏՈՀՄԱԾԱՌ

Աշակերտին ազգային ինքնության հետ կապող առանձին օղակը ստեղծում են ընտանիքն ու սեփական տոհմի պատմությունը:
Ցեղասպանությունը վերապրողների անցյալի փորձն ուղիղ կապով ներթափանցած է ծնողների դաստիարակության ոլորտ:
Ցեղասպանության փաստի ընկալումը սերտորեն կապված էր աշակերտների ընտանիքների անհատական պատմությունների հետ: Նախ բոլորին հանձնարարված էր գծել սեփական տոհմածառը: Երբ խոսքը գնում էր սեփական ընտանիքի ,հարազատների մասին,նրանք իրենց զգում էին ցեղասպանության անդառնալի հետևանքների կրող , չնայած իրենք անմիջականորեն չէին մասնակցել այդ իրադարձություններին: Նրանցից շատերը սկզբում իմ հարցին, թե արմատներով որտեղից են,պատասխանել էին' Երևանից: Սակայն հաջորդ դասին, իրար ընդհատելով, պատմում էին , ներկայացնում իրենց բացահայտումները: Կարծում եմ՝ սա կարևորագույն դաս էր ողջ կյանքի համար:

ԿՈԼՍԺ

Այս առաջադրանքը իրենց առաջարկով կատարեցին մի խումբ աշակերտներ: Նախապես ընտրել էին աշխատանքային նյութերը, կատարել աշխատանքի բաժնում, ընտրել խմբի ղեկավար, որը համակարգում էր գաղափարներն ու աշխատանքը: Ստացանք հրաշալի արդյունք: Ամենակարևորը այն է,որ աշակերտները մեծ հետաքրքրությամբ և պատասխանատվությամբ էին կատարում տրված առաջադրանքները: Ավարտին նրանք ցանկություն հայտնեցին հաջորդ գործնական աշխատանքի դեպքում աշխատել նույն խմբով:

ՄԱԿԵՏ

Այս գործնական աշխատանքների հիմքում աշակերտները դրել էին հայրենիքի , ընտանիքի, հավատի

	գաղափարները: Յոթ որդով սեղան նստող համերաշխ ընտանիքը թուրք բարբարբարոսների զոհ է դարձել: Սեղանին մոր կողմից սիրով դասավորված սպասք է, կոտրված աթոռները ընկած:Իսկ կարմիր կակաչները նահատակված ընտանիքի անդամներն են (հավելված մակետ): Մյուս աշխատանքում հայի տունն է ու եկեղեցին: Թշնամին,ինչպես այսօր Արցախում, հայոց դրոշի փոխարեն իր դրոշներ է կանգնեցրել(հավելված մակետ): Այս երկու աշխատանքները ավելի քան արդիական են, խոսուն,շատ տպավորիչ: Մարիամ Կարապետյանի աշխատանքը նվիրված ցեղասպանություն ճանաչած երկիներին(հավելված մակետ): ՆԱԽՆԻՆԵՐԻՍ ՆԿԱՐՆԵՐԸ ՊԱՏՄՈՒՄ ԵՆ Ներկայացրին Նկարներ և ցեղասպանությունը վերապրած ազգականների գաղթի պատմությունները(հավելված՝ նկարներ): ՍԱՀԻԿԱԾԱՐ "ՊԱՊԵՐԻՍ ԵՐԿԻՐԸ" Սերգեյ Խաչմանյանը և Դավիթ Թառանյանը սահիկաշարի միջոցով ներկայացրին Արևմտյան Հայաստանի հայկական պատմամշակութային ժառանգությունը:

Մոտավոր 10 էջ

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	ԱՐԴՅՈՒՆՔ 1.Նպաստեց կարծրատիպերի հաղթահարմանը: 2.Նպաստեց աշակերտների ինքնաարտահայտմանը,ինքնագնահատականու բարձրացմանը: 3.Ուսուցչին աշակերտներին ավելի լավ ճանաչելու և գնահատելու հնարավորություն տվեց: 4.Դասարանում ձևավորվեց փոխօգնության մթնոլորտ: 5.Առաջացավ առավել ակտիվ լինելու ցանկություն: 6.Բերեց սեփական ուժերի նկատմամբ հավատի: Այս գործնական աշխատանքների շարքը համարում եմ շատ արդյունավետ: Ցեղասպանության թեման անցնելիս պարբերաբար կօգտագործեմ դասավանդման այս մեթոդը:
Այլ տեղեկատվություն	

1-2 էջ

Օգտագործված գրականության ցանկ

1.Մ.Գարագաշեան,Ցեղասպանության հոգեցնցումն ու ազգային ինքնությունը:Հոգեբանական վերլուծություն,Երևան,2006
2.Հ.Տ.Մարության,Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում.տեսական հարցադրումներ,Երևան,"Նորավանք"

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր

- Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ)
- Նկարներ
- Արդյունքներ

Մեջբերում Լալա Կիրակոսյանի "Իմ գերդաստանը վերապրել է...." աշխատանքից ."Պապիկիս տատը պատմում էր .Մեր ընտանիքը բազմանդամ էր ' հայրս,մայրս,երեք եղբայրներս և երկու քույրերս:Ամենափոքր ես էի' ութ տարեկան:Ապրում էինք Աֆիոն Գարահիսարում,որտեղ հայերեն խոսողի լեզուն կտրում էին: 1920թ....գաղթ,փախուստ...:Հայրս կողպեց 3 -հարկանի տան դուռը: Մոդանիա նավահանգիստ հասանք հրաշքով: Մարդկանց ծանրությունից նավամատույցը կոտրվեց: Խեղդվեցին ջրում հայտնվածները, մնացածին կոտորեցին տեղ հասած թուրքերը: Աչքիս առաջ կորցրի ողջ ընտանիքս :Փրկվեցին միայն 10 հայ, այդ թվում՝ ես..":

АРМЯНСКИЙ
ВОПРОС

119